ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2025 թվականի N 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 12 ՀՈՒՆԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 955-Ա ՈՐՈՇՄԱՆ 7-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ կետով , համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 12 հունիսի 2024 թվականի թիվ 955-Ա որոշման 10-րդ հավելվածում կատարել և լրացումներ «***Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» բաժնում կատարել լրացում . ավելացնել ժբ) կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝*** ձևակերպում է համայնքի տնտեսական զարգացման ընդհանուր տեսլականը և նպատակները , ժգ) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝*** Կազմում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրից բխող տեղական տնտեսական զարգացման և տարեկան աշխատանքային պլանները, ինչպես նաև այդ ծրագրի իրականացման նկատմամբ իրականացնում է մշտադիտարկում՝ համագործակցելով համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների և համապատասխան պետական մարմինների հետ ժդ)***կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝***մշակում և իրականացնում է գործողությունների պլան՝ առկա բյուջեի և համայնքապետարանի կողմից սահմանված առաջնահերթությունների շրջանակներում. ժե)***կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝***աջակցություն է ցուցաբերում համայնքի տնտեսական զարգացման և կայուն աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ , ժզ) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝***համապատասխանեցում է տեղական տնտեսական զարգացման պլանը առկա այլ փաստաթղթերի, ներառյալ՝ մշակված ռազմավարությունների, ծրագրերի և մասնավոր հատվածի պլանների հետ ի)***կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝***համագործակցում է համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների, տնտեսական

զարգացման նպատակ հետապնդող պետական այլ հաստատությունների, տեղական ձեռնարկությունների, պոտենցիալ ներդրողների և հասարակական կազմակերպությունների հետ իա) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ***՝վարում է համայնքի (բնակավայրերի) վարչական շտեմարանը.,իբ)***կետ՝ հետևյալ բովանդակությամբ*** նախաձեռնում է համայնքում գործարար միջավայրի զարգացմանն ուղղված գործողություններ իգ)***կետ՝ հետևյալ բովանդակությամբ***՝Կազմում է համայնքի սուբվենցիոն ծրագրերը, նախապատրաստում փաստաթղթեր և ծրագրերի իրականացման աշխատանքներին ցուցաբերում է մասնակցություն իդ) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ***՝կազմում է դրամաշնորհային ծրագրերի մասնակցության պայմանագրեր և ներկայացնում համայնքի ղեկավարի հաստատմանը լ) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ***՝բացահայտում է տեղական գործարարության զարգացման կարիքները և աջակցում արդյունավետ մարքեթինգային խրախուսման միջոցառումների իրականացմանը՝ ներդրումների ներգրավման նպատակով լա) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ***՝գույքագրում է հյուրանոցային տնտեսությունները և համագործակցում հյուրանոցային տնտեսությունների և այլ կազմակերպությունների հետ զբոսաշրջության բնագավառում , լբ) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ***՝Կազմակերպում է համայնքի բնակչության համար հանգստի վայրեր և խթանում համայնքի տարածքում տուրիզմի զարգացմանը լգ) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ***՝Կազմում է տարածաշրջանի տեսարժան վայրերի, պատմամշակութային կոթողների, հուշահամալիրների ուղեցույցներ լդ) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ***՝խթանում է համայնքի տարածքում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը , խ) ***կետ՝ հետևյալ բովանդակությամբ*** իրականացնում է զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումներ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ. հունվարի 15
ք. Ալավերդի